# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄՆ ՈՒՂԵԿՑՎՈՒՄ Է ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԱՅԴ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**N -   Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄՆ ՈՒՂԵԿՑՎՈՒՄ Է ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԱՅԴ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության տարածք շինարարության ոլորտի արտադրանքի ներմուծումը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում սահմանվում են պարտադիր պահանջներ և տվյալ արտադրանքը հանդիսանում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտ՝ մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային հայտարարագրի հետ մեկտեղ մաքսային մարմիններին պետք է ներկայացվեն այդ արտադրանքի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության գնահատման փաստաթղթեր:
2. Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող

շինարարության ոլորտի արտադրանքի համապատասխանությունը հավաստող համապատասխանության գնահատման փաստաթղթերն են համապատասխանության սերտիֆիկատը կամ համապատասխանության մասին հայտարարագիրը:

3. Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող շինարարության ոլորտի արտադրանքի համապատասխանությունը հավաստող համապատասխանության գնահատման փաստաթղթեր մաքսային մարմիններին չեն ներկայացվում, եթե տվյալ արտադրանքը (ապրանքները).

- ներմուծվում (ներմուծվել) է մեկ օրինակից (քանակությամբ), որը նախատեսված է արտաքին առևտրային մեկ պայմանագրով՝ հայտարարատուի կողմից բացառապես սեփական օգտագործման համար (այդ թվում՝ գիտահետազոտական կամ ներկայացուցչական նպատակներով՝ որպես հուշանվեր կամ գովազդային նյութ).
- ներմուծվում (ներմուծվել) է ֆիզիկական անձանց կողմից՝ անձնական օգտագործման նպատակով.
- Ձևակերպվում է «մաքսային տարանցում», «մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «մաքսային պահեստ», «անմաքս առևտուր», «ոչնչացում», «հատուկ մաքսային ընթացակարգ» մաքսային ընթացակարգերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը: